ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

30 հուլիսի 2020 թվականի N 230 - Ա

ԱՐՄԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԱՀՍԿՈՂԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով, 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի 2-րդ և 7-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի N 792-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի 12-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Արման Մխիթարի Մխիթարյանի դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Արման Մխիթարի Մխիթարյանին 2020 թվականի հուլիսի 30-ից 9 ամիս փորձաշրջանով նշանակել Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) տնտեսական ոլորտի վերահսկողության վարչության գլխավոր վերահսկողի (ծածկագիր՝ 52-24"1-Մ1-1) պաշտոնում:

2. Փորձաշրջանը համակարգող նշանակել Ծառայության տնտեսական ոլորտի վերահսկողության վարչության գլխավոր վերահսկողի (ծածկագիր՝ 52-24"1-Մ1-5) պաշտոնակատար Բաբկեն Հովսեփյանին:

3. Ծառայության տնտեսական ոլորտի վերահսկողության վարչության գլխավոր վերահսկողի (ծածկագիր՝ 52-24"1-Մ1-1) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնող Արման Մխիթարի Մխիթարյանի հետ 2018 թվականի հուլիսի 13-ին կնքված N 26 ժամկետային աշխատանքային պայմանագիրը 2020 թվականի հուլիսի 30-ից համարել լուծված:

4. Աշխատավարձը սահմանել համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Signed by: BAGHDASARYAN ANI 7504910546